600.0318.12.07.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

12 հուլիսի 2017 թվականի №318Ա

ք.Երևան

«ՌԱՊԻԴԱ» ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՀԱՄԱԿԱՐԳ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ «ՇՈՐԺԱ 1» ԱՐԵՎԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՈՒՄ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀԶՈՐՈՒԹՅԱՆ) ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, 23-րդ և 35-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը և հաշվի առնելով «ՌԱՊԻԴԱ» ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՀԱՄԱԿԱՐԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2017 թվականի հունիսի 27-ի հայտը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. «ՌԱՊԻԴԱ» ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՀԱՄԱԿԱՐԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրել «Շորժա 1» արևային էլեկտրակայանում (Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Շորժա համայնքի վարչական տարածքում) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա՝ մինչև 2038 թվականի հուլիսի 12-ը գործողության ժամկետով, որից կառուցման ժամանակահատվածը՝ մինչև 2018 թվականի հուլիսի 12-ը:
2. Հաստատել «ՌԱՊԻԴԱ» ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՀԱՄԱԿԱՐԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Շորժա 1» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիայի պայմանները՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
12 հուլիսի 2017թ.
ժամը 16[00]